ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Փետրվարի 18-ին՝ կիրակի.—Զ կիրակի զկնի Մննդեան։ Մայր տաճարում պատարագեց և քարոզեց հոգ. տ. Ներսես ծ. վրդ. Պոզապալյանը «Արդ արձակեա զիս Տէր ի խաղաղութիւն» բնաբանով։

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

* * *

Փետրվարի 24-ին՝ շաբաթ.—Անպաշտոն կերպով առավոտյան ժամը 12-ին Մայր տաճար այցելեցին, որպես զբոսաշրջիկներ, Մոսկվայի ԱՄՆ-ի դեսպանատնից դեսպանի տեղակալ Ալեն Դեվիսը և դեսպանության քարտուղար Վիլյամ Դեյյեսը իրենց տիկնանց հետ։ Հյուրերը եղան նաև Վեհափառ Հայրապետի մոտ։

Երեկոյան ժամը 4-ին Մայր տաճար այցելեցին Հունգարիայի Ժողովրդական Հանրապետությունից մի խումբ պաշտոնական անձինք։ Այդ թվում ՀԺՀ-ի փոխվարչապետ, Հունգարիայի հեղափոխական բանվորական կուսակցության քաղբյուրոյի անդամ Անտալ Ապրոն, Հունգարիայի արտաքին առևտրի մինիստր Յոզեֆ Բիրոն, Հունգարիայի ֆինանսների մինիստր Պետեր Վային։ Հյուրերին ընկերակցում էին Սովետական Հայաստանի վարչապետի առաջին տեղակալ ընկ. Մովսիսյանը և Սովետական Միության ատոմային էներգիայի օգտագործման պետական կոմիտեի նախագահ Անդրանիկ Պետրոսյանը։ Հյուրերին Վեհարանում ընդունեց Վեհափառ Հայրապետը։

* * *

Փետրվարի 25-ին՝ կիրակի.—Բուն Բարեկենդան։ Մայր տաճարում պատարագեց հոգ. տ. Նարեկ վրդ. Շաքարյանը։ Քարոզեց գեր. տ. Հուսիկ եպսկ. Սանթուրյանը «Որ զօրէնս սրբութեան պահոց նախ ի դրախտին աւանդեցեր» բնաբանով։

* * *

Մարտի 1-ին՝ ուրբաթ.—Նոամսյա բացակայությունից հետո Մայր Աթոռ վերադարձավ ս. Էջմիածնի Մայր տաճարի լուսարարապետ գեր. տ. Հայկազուն արք. Աբրահամյանը, որը որպես հայրապետական պատվիրակի հովվական այցելությամբ մեկնել էր Հնդկաստան։ Երևանի օդանավակայանում սրբազանին դիմավորեցին հոգ. տ. Մուշեղ, տ. Ներսես, տ. Նարեկ վարդապետները, Մայր Աթոռի դիվանապետ պ. Հայկ Առաքելյանը, «Էջմիածին» ամսագրի խմբագիր պ. Ա. Հատիտյանը և բարեշնորհ Գրիգոր սրկ. Բունիաթյանը։

* * *

Մարտի 3-ին՝ կիրակի.—Բ կիրակի Քառասնորդական պահոց (Արտաքսման)։ Մայր տաճարում ս. պատարագ մատուցեց հոգ. տ. Գևորգ վրդ. Սերայդարյանը։ Քարոզեց հոգ. տ. Նարեկ վրդ. Շաքարյանը «Եթէ յուսոյն ձգարան սուսերքն յանցպանց հատեալ կըտրեսցի, կցեսցի դարձեալ միւսանգամ կամօք Ամենակալիդ բարւօք պատուաստեալ» (Նարեկ) բնաբանով։

* * *

Մարտի 5-ին՝ երեքշաբթի.—Վեհափառ Հայրապետի նախագահությամբ գումարվեց Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը, որին ներկա էր վերջերս իր կատարած հովվական այցելությունից՝ Հնդկաստանից վերադարձած գեր. տ. Հայկազուն արք. Աբրահամյանը, որը զեկուցեց իր տված այցելության մասին։ Ժողովի վերջում Վեհափառ Հայրապետը շնորհակալություն հայտնեց գեր. տ. Հայկազուն արքեպիսկոպոսին զեկուցման համար։

*
* *

Մարտի 7-ին՝ հինգշաբթի.—Առավոտյան ժամը 13-ին Վեհափառ Հայրապետը Երևանում, Արտասահմանի հետ մշակութային կապի ընկերության դահլիճում, ներկա եղավ կազմակերպության տարեկան ընդհանուր ժողովին։ Վեհափառ Հայրապետին ընկերակցում էին «Էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հատիտյանը և տ. Նարեկ վրդ. Շաքարյանը։

Ժողովին ելույթ ունեցավ նաև Վեհափառ Հայրապետը։

*
* *

Մարտի 9-ին՝ շաբաթ.—Ժամը 13-ին Վեհարանում Վեհափառ Հայրապետի նախագահության ներքո գումարվեց Մայր Աթոռին առընթեր Ճարտարապետական հանձնաժողովի հերթական նիստը, ուր քննության առնվեց և հաստատվեց 1968 թ. Մայր Աթոռից ներս և նրանից դուրս շինարարական ձեռնարկների ծրագիրը։

*
* *

Մարտի 10-ին՝ կիրակի.—Գ կիրակի զկնի քառասնորդական պահոց (Անառակին)։ Մայր տաճարում պատարագեց արժ. տ. Մկրտիչ քահ. Մկրտչյանը։ Քարոզեց դեր. տ. Հայկազուն արք. Աբրահամյանը։

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

*
* *

Մարտի 16-ին՝ շաբաթ.—Վեհափառ Հայրապետի նախագահությամբ գումարվեց Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը, ուր քննության առնվեց և հաստատվեց ներքին թեմերի խորհրդակցական ժողովի ծրագիրը, որ տեղի է ունենալու մարտի 19—22 օրերին ս. Էջմիածնում։

*
* *

Մարտի 16-ին՝ շաբաթ.—Այսօր երեկոյան, շուրջ երկու ամիս Սիրիայում ծնողներին և հարազատներին այցելելուց հետո, Մայր Աթոռ վերադարձավ Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ դեր. տ. Վահան եպս. Տերյանը։ Սիրիա գտնված օրերին դեր. սրբազանը ազգային եկեղեցական իշխանությունների հրավերով պատարագել և Բանին կենաց քարոզությամբ մխիթարել է հավատացյալ ժողովրդին Դամասկոս և Հալեպ քաղաքներում։

*
* *

Մարտի 17-ին՝ կիրակի.—Դ կիրակի քառասնորդական պահոց (Տնտեսին)։ Մայր տաճարում պատարագեց արժ. տ. Հակոբ քհն. Հակոբյանը։ Քարոզեց հոգ. տ. Մուշեղ վրդ. Պետիկյանը «Եւ գովեաց տէրն զտնտեսն անիրաւութեան» բնաբանով։